ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՐՑ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետը, 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, 96-րդ հոդվածը, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը,

Կարևորելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (Կոդ՝ Խ-110-07.12.2021-ՊԱ-011/0) (հեղինակ՝ «Հայաստան» խմբակցություն) առաջարկվող կարգավորումը:

Նկատի առնելով այն, որ նշված՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը՝ Ազգային ժողովի Պաշտպանության և ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը 03.02.2022թ. նիստում տվել է բացասական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Համաձայնություն տալ և անհրաժեշտ համարել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկումը Ազգային ժողովի նիստում:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը համարել արտահերթ հարց, որը քննարկման է ենթակա Ազգային

ժողովի 2022թ. փետրվարի 8-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին՝ սույն որոշմամբ նախատեսված հարցն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգ և կազմակերպել դրա քննարկումը սույն որոշման 2-րդ կետում նշված նիստում, որպես ընդդիմադիր խմբակցության կողմից արտահերթ համարված հարց:

4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնական զեկուցողն է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդևանյանը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՕՀԱՆՅԱՆ

04.02.2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 96-րդ հոդվածը, կից ներկայացնում եմ «Հայաստան» խմբակցության որոշումը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն (Կոդ՝ Խ-110-07.12.2021-ՊԱ-011/0) արտահերթ հարց համարելու մասին՝ այն սահմանված կարգով Ազգային ժողովի 2022թ. փետրվարի 8-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում քննարկում կազմակերպելու նպատակով:

Առդիր 2 էջ:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՕՀԱՆՅԱՆ

04.02.2022թ.